



ՍՈՒՐԻԱՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏԸ (Ակնարկ)

Սուէ Փիլաւճեան
bbassel123@gmail.com

ՄՈՒՏՔ

Մշակութային բարբարոսութիւն կամ հազարամեակներու քաղաքակրթութեան մը սպանդ կարելի է բնութագրել հինգ տարիներէ ի վեր Սուրիոյ տարածքին տեղի ունեցող պատերազմը, որուն հետեւանքով՝ յատկապէս հօրս հաւաքածոյին կրած անդառնալի կորուստին ակնարկային ձեւով պիտի անդրադառնամ այստեղ:

Բնական Սուրիան աշխարհագրական, քաղաքակրթական ու մշակութային բազմաշերտ երկիր է, ուր առկայ են մարդկային հնագոյն հետքեր: Սուրիոյ շնորհիւ հայերը տնտեսական, մշակութային եւ այլ բնոյթի սերտ կապեր հաստատեցին հարաւի երկիրներու հետ: Հայ ուխտատուներու դէպի Երուսաղէմ ճանապարհը կ'անցնէր Սուրիոյ տարածքէն, ուր ժամանակի ընթացքին իջեւանատուներ կառուցուեցան Հալէպի, Լաթաքիոյ, Դամասկոսի մէջ եւ., որոնք *հոգեպրուն* անուանուեցան: Հոգետուները սոսկ օթեաններ չէին, այլ՝ առետրատնտեսական եւ կրօնամշակութային կեդրոններ, տարբեր ազգերու միջեւ հաղորդակցութեան վայրեր:

Սուրիոյ հայ համայնքի բարգաւաճ անցեալի մասին կը վկայեն տարբեր ժամանակներուն կառուցուած վանքերը, Եկեղեցիները, հոգետուները, վանքապատկան ընդարձակ կալուածները, ինչպէս.-

- Եագուպիէի Ս. Աննա ուխտավայր-մատուռը, կառուցուած 1380ին:
- Դամասկոսի Ս. Սարգիս Վանքը, կառուցուած 1400ականներուն:
- Արամոյի Ս. Աստուածածին Եկեղեցին, կառուցուած 1466ին:
- Արամոյի Ս. Գէորգ Եկեղեցին, կառուցուած 15րդ դարուն:
- Լաթաքիոյ Ս. Աստուածածին Եկեղեցին, կառուցուած 1755ին:
- Հալէպի ԺԴ. դարու Ս. Քառասնից Մանկանց մայր Եկեղեցին:
- Եագուպիէի Ս. Թէոդորոս մատուռը, կառուցուած 1770ին:

1923ին երբ կը ստորագրուէր Լոզանի Պայմանագիրը, արդէն Արեւմտահայաստանի ու Կիլիկիոյ հայութեան ողջ մնացած բեկորները զիրուցան սփռուած էին Մեծն Սուրիոյ (Սուրիա-Լիբանան) տարածքին:

Ակնկալելի էր որ այդ խլեակները իրենց հետ բերած ըլլային պապենական հայրենիքէն իրեղէններ: Այս պատճառներու բերմամբ պապենական նշխարներով յարաբերաբար հարուստ են Հալէպն ու շրջակայքը: Ուստի, արդիւնաւէտ կրնային ըլլալ հաւաքորդներու հետեւողական որոնումները:

ՍՈՒՐԻՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՔԱՆԴՈՒՄ-ԿՈՐՈՒՍՆԵՐ

Սուրիոյ մէջ տիրող քառասային վիճակին հետեւանքով, սուրիահայերու որոշ հատուած մը լքեց երկիրը դէպի համեմատաբար աւելի ապահով վայրեր: Քանդուեցան ու հրկիզուեցան հայկական սրբավայրեր, արձանագրուեցան զոհեր:

Աղիտալի կորուստներ կրեց Հալէպի Ս. Գէորգ Եկեղեցին (կառուցուած 1923ին), ուր հրկիզուեցան հնատիպ աղօթագիրքեր, շարակնոցներ, մաշտոցներ, Մարաշէն բերուած եկեղեցական սպասներ, ասեղնագործներ, սրբապատկերներ:

Հայութեան համար խորհրդանշական կարեւորութիւն ունեցող Տէր Զօրի Սրբոց Նահատակաց Եկեղեցին (կառուցուած 1991ին), որ համազգային ուխտավայրի վերածուած էր, Եղեռնի իր հարուստ թանգարանով եւ սուրբերու աճիւններու մասունքներով ենթարկուեցաւ քանդումի:

Ծանր վնասներու ենթարկուեցան Սուրիոյ այլազան քաղաքներու մէջ գործող հայկական եկեղեցիներ. հրկիզուեցան Քեսապի Հայ Առաքելական Ս. Աստուածածին Եկեղեցին (կառուցուած 1880ին), Հայ Աւետարանական Ս. Երրորդութիւն Եկեղեցին (կառուցուած 1909ին): Իսկ Հայ Կաթողիկէ Ս. Միքայէլ Եկեղեցւոյ (կառուցուած 1926ին) գանձերը կողոպտուեցան: Հալէպի Հայ Կաթողիկէ աթոռանիստ Մայր Գթութեանց Եկեղեցին (կառուցուած 1840ին) աւերուեցաւ: Կից ծխական Ս. Գրիգոր Լուսաւորիչ վարժարանը եւս հրթիռակոծուեցաւ: Դամասկոսի Հայ Կաթողիկէ Առաջնորդարանն ու ծխական վարժարանը հրթիռակոծման թիրախ դարձան: Բաքբայի Հայ Կաթողիկէ Նահատակաց Եկեղեցին ծայրայեղական ՏԱՀԷՇԻ դատական ատեանի կեդրոնի վերածուեցաւ:

Պատմամշակութային նշանակութիւն ունեցող Հալէպի Ս. Քառասնից Մանկանց մայր Եկեղեցին եւ ուշ միջնադարէն գոյութիւն ունեցող ազգային առաջնորդարանին շէնքը, որ պարբերաբար դարձած էր նաեւ կաթողիկոսական աթոռանիստ, ենթարկուեցան լուրջ վնասներու:

Այսքանով վերջ չի գտներ սուրիահայ կրօնական շէնքերու եւ հաստատութիւններու կորուստը: Այստեղ չենք խօսիր միութենական հաստատութիւններու, վարժարաններու, համայնքային հանրային շինութիւններու աւերին ու քանդումին մասին...:

Սուրիոյ պատերազմին հոգետր արժէքներու առաջին դառն հետեւանքը եղաւ Փիլաճեաններու բնակարանին հիմնովին կործանումը: Բնակարանին մէջ մէկտեղուած էին տարածաշրջանի հայկական ազգային արժէքներու

բաղկացուցիչ մաս եղող Խորէն Փիլաւեանի ընտիր հաւաքածոն եւ Շաքէ Փիլաւեանի ժանեկագործական յօրինուածքները¹:

ՀԱԻԱՔՈՐԴ ՀԱՅՐԱ (1934-98)

Թէ ինչպէս հօրս՝ Խորէն Փիլաւեանի, մօտ ազգին հնաւանդ գանձերը որոնել-հաւաքելու ձգտումը ընթացք առած է՝ ինք հետեւեալ կերպ կը վկայէ.

Հալէպի հայաբնակ Նոր Գիւղ թաղամասի, Մեսրոպեան Վարժարանի երկրորդ կարգի աշակերտ էի, երբ քրիստոնէականի դասատուն՝ յետագային Տէր Գարեգին Քինյ. Քիրազեան, համադասարանցիներուն հարց տուաւ.

- Զեզմէ որուն տունը *Նարեկ* աղօթամատեան կայ:

Անմիջապէս ձեռքս բարձրացնելով ըսի. «Մեր տունը, եւ երբ մեզմէ մէկուն դժբախտ պատահար մը կատարուի՝ մայրս *Նարեկէն* աղօթք մը կը կարդայ եւ արկածը կը վերանայ»:

- Գնա՛ եւ բե՛ր:

Մեր բնակարանը դպրոցին յարակից չորրորդ թաղամասն էր: Ինչ հաճելի պահ, մանկական անմեղ հոգեբանութեամբ՝ դասէն փախչելու համար պատեհ առիթ էր, շտապեցի եւ մօրս յայտնեցի դասատուին խնդրանքը: Ան խիստ բարկացաւ.

- Այս աղօթամատեանը շատ թանկարժէք գիրք է, մեծհայրս զայն Մարաշէն բերած է, ան Մարաշի հայ եկեղեցոյ աւագ քահանան եղած էր:- Մօրս հանգստացուցի եւ վստահեցուցի, որ շատ զգուշ կը վարուիմ այդ մասունքին հետ:

Երբ դասատուն աղօթամատեանը տեսաւ, հիացմունքը չթաքցնելով զայն ուսուցչարան տարաւ:

- Տեսէ՛ք, 1736ի *Նարեկ* է:

Ուսուցչակազմին սքանչանքն ու զմայլանքը դեռատի հոգույս մէջ անջնջելի դրոշմ մը քանդակեցին եւ անկիւնադարձային եղան: Այդ պահէն սկսեալ, մէջս յատուկ սէր եւ հակում արթնցան հնութեանց հանդէպ: Ասոր կողքին, հայրս՝ Տիգրան Փիլաւեանը, ծագումով Քիլիսէն, կը զբաղէր լումայափոխութեամբ. այդ պատճառաւ յաճախ ձեռք կը բերէր հին դրամներ, որոնք մեծ խանդավառութեամբ ցոյց կու տար իր միտումարին՝ ինծի, քանզի ես միակ այր ժառանգորդն էի՝ չորս դուստրերուն:

Յետագային այդ սէրը զարգացաւ:

ՀՕՐԱ ՀԱԻԱՔԱԾՈՆ

Հալէպի մէջ հայ անցեալին վերաբերող կամ առնչուող միջոցառումներուն՝ հօրս հաւաքածոն էր, որ կը հարստացնէր եւ կ'իմաստաւորէր ներկայացուած թեման:

Նպարավաճառությամբ զբաղող հայրս օրնիրուն կը տքնէր՝ ներառեալ տօնական օրերը. միակ հանգիստի պահը՝ Կիրակի յետմիջօրէն էր: Բայց որովհետեւ ան իր ամբողջ էութեամբ համակ նուիրում էր՝ յօգուտ ազգանուէր այս առաքելութեան, ան իր անձնական նախաձեռնութեամբ գերադասեց հաւաքածոն հարստացնել քան՝ հանգստանալ ու կազդուրուիլ: Այսպէս, Կիրակի յետմիջօրէին, անոր շրջապատոյտը կը սկսէր Հալէպի ծերանոցներէն, ապա կ'անցնէր հին շուկաները, եկեղեցիները, մզկիթները եւ այն վայրերը, ուր կ'ակնկալէր հայկական կորած իր մը գտնել:

Գործի բերումով ան կը շփուէր ո՛չ միայն հալէպահայութեան հետ, այլեւ՝ շրջակայքի հայերուն, որոնք իրենց ամանորի սեղանը հայկական միրգ ու չիրերով ճոխացնելու համար Հալէպ՝ իր խանութէն գնում կը կատարէին: Իսկ հայրս հետախոյզի բժախնդրութեամբ հարցումներ կ'ուղղէր անոնց՝ իմանալու պապենական հայրենիքէն բերուած ինչպիսի ուշագրաւ պատառիկներ հասած են իրենց: Վերջ չունեցող հարցումներու տարափէն ետք, երբ իմանար թէ ինչ-որ մասունք մը, կամ նշխար մը յայտնուեցաւ՝ ամէն ճիգ ի գործ կը դնէր անոր տիրանալու: Մեծ գումարներով եւ այլ միջոցներով ձեռք բերուած իր այս հաւաքածոն կ'ընդգրկէր.-

- Ձեռագիր մատեաններու պատառիկներ, հնատիպ գիրքեր, հայկական դրամներ.
- Փաստաթուղթեր՝ Հայոց Յեղասպանութեան եւ արեւմտահայութեան կրած տանջանքներուն վերաբերող.
- Երուսաղէմի Ս. Յակոբ Վանքի հոգեւորականութեան լուսանկարներ.
- Խրիմեան Հայրիկի կաթողիկոսական օժման օրուան լուսանկար եւ հայրապետէն այլ պատկերներ.
- Կոմիտաս Վրդ.ի ծայնապնակը իր իսկ ծայնով, եւ անտիպ նկարներ.
- Դանիէլ Վարուժանի, Ռուբէն Սեւակի անտիպ լուսանկարներ.
- Պոլսոյ Կեդրոնական Վարժարանի՝ ասարտականներու լուսանկար, ուսուցչակազմին մէջ՝ Լեւոն Շանթ եւ Ինտրա, Ատանայի վարժարանէն 1909ի վկայական, տնօրէն՝ Ինտրա, արեւմտահայութեան ազգագրական տարազներու լուսանկարներ, վարժարաններու ասարտականի վկայականներ, ուր նշուած են դասանիւթերը՝ կրթական համակարգը պարզող.
- ՀՅԴաշնակցութեան Տրդ ընդհանուր ժողովէն լուսանկար.
- ՀՀ համալսարանի 1926ի դասախօսակազմի լուսանկար.
- Արարայի Ճակատամարտի մասնակից հայ լեգէոնական՝ Բենիամինին շնորհուած պատուոյ շքանշանը՝ վկայականով, ստորագրուած՝ Ֆրանսայի հանրապետութեան նախագահէն.
- Նեմեսիսականներու անտիպ լուսանկարներ.
- Պոլսահայ թատրոնէն լուսանկարներ՝ Ֆելէկեան քոյրերու են.

- Բերիոյ Թեմի հայութեան ընդհանուր պատկերը պարզող փաստաթուղթեր, լուսանկարներ՝ հիւղաւաններու, վարժարաններու, եկեղեցիներու եւն.
- Քարէն Եփփէի արխիւը, Յակոբ Օշականի գրիչը, Լեւոն Շանթի եւ Սօսէ Մայրիկի ակնոցները.
- Հայկական ասեղնագործութեան նմուշներ՝ տարբեր գաւառներու պատկանող. հայկական կիրառական արուեստի նմուշներ, եկեղեցական անօթներ, կենցաղային պղնձեայ սպասներ, փայտէ ժամացոյցներ, Կուտինայէն յախճապակիներ, խեցեղէններ.
- Արցախեան կարպէտներ, միջնադարեան կտաւներ.
- Կանացի արծաթեայ զարդեղէններ.
- Պատմական լուսանկարներ որոնք նկարատետրի մէջ դասաւորուած էին քաղաքներու հերթականութեամբ.
- Ատանայի առաջնորդարանին, Հալէպի առաջնորդարանին վերաբերող նամակներ, դիւանական նիւթեր.
- Գորգեր, եկեղեցական սպասներու ընտիր նմուշներ, հայ նկարիչներու գործերէն Տիրամօր նկարներ, լուսանցազարդուած ձեռագիրեր եւ նման բազմաթիւ այլ մասունքներ:

Ան այս նիւթերը դրաւ ուսումնասիրողներու տրամադրութեան տակ, որոնք կ'ուսումնասիրէին հայկական ազգագրական տարազը, Հալէպի պատմութիւնը, հայ կրթական ճիգը, Հալէպի թէ Արեւմտեան Հայաստանի կարգ մը վարժարաններու դիւանային նիւթեր եւն.:

Այս թանկարժէք հարստութիւններէն բաժին մը հայրս պարբերաբար դրկած էր Մ. Մաշտոցի Անուան Մատենադարանին² եւ ՀՀ Ազգային Արխիւին³:

ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՂ ՄԱՅՐՍ (1937-2014)

Հայրս իր ունեցած նախասիրութեան մասնակից դարձուցած էր մայրս՝ Շաքէ Գապագեան-Փիլաւեանը, մղում տալով անոր ասեղնագործելու բնածին տաղանդին:

Մօրս ասեղնագործ կտաւները հիւսուածք ըլլալէ աւելի՝ ինքնարտայայտման ձեւ ու ապրում են, սէր, բնագոյական ձգտում՝ դէպի արուեստը:

Մայրս քաջածանօթ ըլլալով իր ժողովուրդի պատմութեան՝ ասեղնագործութեամբ, նուրբ թելերու խիտ ու վարպետ հիւսուածքով արտայայտած է իր հայրենասիրութիւնը: Մետաքսի վրայ բանուած իր նրբաշխատ գործերը ունին հայկական բնոյթ՝ ոչ միայն հիւսուածքի ձեւին ու ոճին առումով, այլեւ՝ իրենց պատմական թեմաներով:

Իր ստեղծագործական կեանքի առաջին արգասիքը հանդիսացաւ հայկական մանրանկարչութենէն Թորոս Ռոսլինի «Աւետումն

Աստուածածնայ» գործի կտաւային քառապատիկ ծաւալով վերարտադրութիւնը: Շուրջի փճացած լուսանցազարդերը բժախնդրօրէն եւ ներդաշնակութեամբ վերականգնած այս գործը մօրս այցեքարտը հանդիսացաւ ժանեկագործութեան ասպարէզի մէջ: Այնուհետեւ, ան արարեց հայկական խաչքարը, Հայկական Կիլիկիոյ պետական խաչը (զայն եզերելով բուսական պատկերներով, որոնք կը զարմացնեն հիւսուածքի պատմականութեամբ), Բագրատունեաց Թագաւորութեան (նուրբ ու մանրակրկիտ բանուածքով) եւ Պռօշեաններու տոհմական կնիքները, Հայաստանի եւ Արցախի հանրապետութեանց զինանշանները եւն., որոնք զարդարած էին մեր բնակարանին պատերը:

Մեր վարպետներու բազմադարեան փորձը կարծէք կուտակուած ըլլար մօրս ասեղին ծայրը ու հրաշքներ գործած՝ կտաւի վրայ:

«Մայրս կը գործէր ասեղով, եւ ես հիացած կը նայէի ու անգամ մը, երբ ան զբաղած էր խոհանոցը, շատ զգուշ փորձեցի փոքրիկ հատուած մը հիւսել: Այն ժամանակ ես տակաւին հինգ տարեկան էի. մայրս աչքերուն չհաւատաց»՝ խանդավառութեամբ կը յիշէր մայրս:

Մօրս այդ համարձակ արարքը նախաքայլը եղած է իր ստեղծագործական աշխատանքներուն:

Մայրս ինքզինք փորձեց հայկական ասեղնագործութեան գրեթէ բոլոր մարզերուն մէջ: Իր փորձառութիւնը փոխանցեց նորահաս սերունդներուն՝ ասեղնագործութեան դասեր տալով հալէպահայ երիտասարդ հայուհիներու՝ Սուրիահայ Օգնութեան Էսաչի կազմակերպած դասընթացքներով: Հալէպի մէջ, մասնակցելով տարբեր ցուցահանդէսներու՝ հայ եւ արաբ արուեստասէրին ծանօթացուց հայկական ասեղնագործութեան արուեստը: Բանուածք մը, կամ նախշ մը հեռուէն իսկ նկատելով կրնար զայն կրկնօրինակել:

Իր ասեղնագործական հսկայ հաւաքածոն անհետացաւ մեր տան փլուզումով⁴:

ԵԶՐԱՓՈՒՄ

Սփիւռքեան իրականութեան մէջ ազգային արժէքներու պահպանման գործին նուիրեալ անձինք, որքան ալ փորձեն սեփական ուժերով պահպանել զանոնք ոչնչացումէ ու վերացումէ, այնուամենայնիւ անզօր են այդ արժէքները ապահովագրել տարերային ու բնական աղէտներէ եւ կամ յանկարծ ուժգնացող պատերազմի մը անկանխատեսելի ու կործանարար հետեւանքներէն:

Թերեւս պէտք էր թուայնացուէին այդ նիւթերը եւ համացանցի միջոցով մատչելի դարձուէին հեռու եւ մօտիկ ուսումնասէրներուն:

Հոգեւոր, ազգային եւ մշակութային արժէքներու անվտանգութեան ապահովումը բոլորիս առաջնահերթ եւ անյետաձգելի մտահոգութիւնը պէտք

է դառնայ: Ան պէտք է դառնայ նաեւ նոյնինքն հաւաքորդներուն մտահոգութիւնը...: Այս բոլորը պէտք է ընել, որպէսզի զերծ մնանք Փիլաճեաններու պատահած նման կորուստներէ:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Երբ կացութիւնը վատթարացաւ, մենք լքեցինք մեր Պոստան Փաշայի տունը, որ քառայարկ շէնք մըն էր, ու ապաստանեցանք եղբորս ասելի ապահով տունը: Մեր մեկնումին յաջորդ օրը՝ 7-8 Սեպտեմբեր 2013ին շէնքը փլած էր արդէն:
- ² Գլխաւորաբար ձեռագրային պատահիկներ դրկած է հայրս Մատենադարան:
- ³ Հօրս մահէն ետք ՀՀ Ազգային Արխիւէն ստացանք նամակ մը, որով կ'առաջարկուէր որ հօրս դիւանային հաւաքածոն նուիրենք Ազգային Արխիւին եւ իր անունով բաժին մը յառաջանար հոն:
- ⁴ Մայրս չէ ծախած իր ասեղնագործներէն բնաւ:

A Brief View of Syrian-Armenian Cultural Loss (Summary)

Sose Pilavdjian
bbassel123@gmail.com

The paper notes that Aleppo was the first station of Armenian refugees and a principal settlement area for them. She argues that this fact has led Armenians and others to venture into collecting Armenian cultural artifacts in Syria. Indeed a number of Syrian-Armenian collectors have been instrumental in collecting Armenian cultural materials including manuscripts, 19th century photos, souvenirs and mementos of the fatherland, songs and tales, carpets, handcrafts, needlework, documents, coins, etc.

Based on personal experience, the author details the loss of her father's rich collection of Armenian cultural artifacts, lost when their apartment and the whole building was demolished by the very first bombs that hit Aleppo.

The paper surveys the damage a number of Armenian medieval architectural monuments have suffered in the ongoing war in Syria, alongside the destruction and ruining of 20th century Armenian churches, cemeteries and monuments, erected in memory of the Armenian Genocide, particularly those in Aleppo, Der Zor and Margade.